

ՔԱՂՎԱԾՔ


ՀՀ Շիրակի մարզի «Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի կայացած թիվ 45 նիստի արձանագրությունից:

Օրակարգում.-1. Ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին / զեկուցող՝ կառավարման խորհրդի նախագահ Ա. Ստամբուլյան /

Հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզպետի 29 հունվարի 2019 թվականի Թիվ 15-Ա՝ որոշումը՝ ՀՀ Շիրակի մարզի «Ծաղկուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդան Պողոսյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319 - Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության / նշանակման / կարգ»-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ ՀՀ Շիրակի մարզի «Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Շիրակի մարզի «Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2019 թվականի փետրվարի 21-ից մարտի 22-ը ներառյալ հայտարարել մրցույթ:
2. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց /15.02.2019թ./ առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության կառավարման պետական լիազորված մարմնին:
4. Մրցույթը անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել ԶԼՄ-ներում /15.02.2019թ. առաջին, 20.03.2018թ. երկրորդ/
5. Մրցույթը անցկացնել «Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում 2019 թվականի ապրիլի 2-ին, ժամը 14⁰⁰-ին:
6. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 2019 թվականի փետրվարի 21-ից 2019 թվականի մարտի 22-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

ՀՀ Շիրակի մարզի «Ծաղկուտի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ կառավարման խորհրդի նախագահ՝  Ա. Ստամբուլյան

04.02.2019թ